Հարգելի գործընկեր,

Խնդրում ենք պարզաբանեք հետևյալ տեխնիկական պարամետրերը՝

1. «ՌՀ վանդակի (Ֆարադեյի) և դիտման պատուհան կառուցում և տեղադրում՝ առաջարկվող համակարգի տեղադրման համար նախատեսված տարածքում»: Այս տեխնիկական պարամետրը դիտարկելիս հասկանալի չէ, թե ինչպե՞ս է հնարավոր հաշվարկել մի ինչ-որ ծավալի աշխատանքի գին, ինչի գծագիրը (հեռավորություն, տարածք և այլ տվյալները) բացակայում է հրավերով նախատեսված փաթեթի մեջ: Կամ ի սկզբանե արդեն պայմանավորվածություն է ձեռք բերված հրավերով պահանջվող սարքի դեռևս չկայացած գնման գործընթացի հաղթող կազմակերպության հետ, կամ...

2. Ինչո՞վ է պայմանավորված «Մագնիսի երկարությունը՝ ոչ ավել, քան 145 սմ» տողում ներկայացված տվյալի ընտրությունը: Ներկայացված տվյալը բնորոշում է միայն մեկ արտադրողի: Այդ իսկ պատճառով, խնդրում ենք տողը լրացնել ՀՀ Գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան:

3. Ինչո՞վ է պայմանավորված «Սեղանի դեկաի հորիզոնական ուղղությամբ տեղաշարժը՝ ոչ պակաս, քան 265 սմ» տողում ներկայացված տվյալի ընտրությունը: Այս պարամետրը ամեն արտադրողի մոտ կարող է տարբերվել սեղանի և մագնիսի տեխնիկական առանձնահատկություններից ելնելով և չի ազդում ոչ ֆունկցիոնալության, ոչ էլ որակական չափանիշներին: Եվ այն ֆիքսելով «ոչ պակաս, քան 265 սմ» խախտվում է այլ համաշխարհային առաջատար արտադրող կազմակերպությունների մասնակցության հնարավորությունը: Խնդրում ենք փոփոխել այս պարամետրը:

4. Ինչո՞վ է պայմանավորված «Սեղանի ուղղահայաց շարժման միջակայքը՝ ոչ պակաս, քան 42 սմ» տողում ներկայացված տվյալի ընտրությունը: Այս պարամետրը ամեն արտադրողի մոտ կարող է տարբերվել սեղանի և մագնիսի տեխնիկական առանձնահատկություններից ելնելով և չի ազդում ոչ ֆունկցիոնալության, ոչ էլ որակական չափանիշներին: Եվ այն ֆիքսելով «ոչ պակաս քան 42 սմ» խախտվում է այլ համաշխարհային առաջատար արտադրող կազմակերպությունների մասնակցության հնարավորությունը: Խնդրում ենք փոփոխել այս պարամետրը:

5. Ինչո՞վ է պայմանավորված «Թվային ազդանշանի փոխանցման հզորությունը՝ ոչ պակաս քան 24 ԿՎտ» տողում «ոչ պակաս» չափորոշիչի ընտրությունը: Ավելի հզորը չի նշանակում ավելի լավը: Խնդրում ենք վերանայել այս չափորոշիչը:

6. «Ծրագրերի համար սահմանվում է առնվազն 730 օրացուցային օր երաշխիքային ժամկետ»՝ պարզաբանեք հնարավորինս հասկանալի, թե ինչ է այս չափորոշիչը նշանակում: Ո՞նց հասկանանք ծրագրային ապահովման երաշխիք: Խնդրում ենք հստակեցնել:

7. «Համակարգի տեղադրման, կարգաբերման և հետագա սպասարկումն ապահովելու համար համապատասխան հավաստագրերի առկայություն»: Խնդրում ենք հստակեցնել, թե՞ որոնք են այդ հավաստագրերը:

8. «CE (Conformité Européenne) և/կամ FDA և/կամ IVD (In Vitro Diagnostic) հավաստագրեր կամ համապատասխան:»: In-Vitro Diagnostic ի՞նչ կապ ունի այս սարքի հետ և ինչով է պայմանավորված այս փաստաթղթի առկայությունը:

9. Ձեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրով բնորոշվում է միմիայն մեկ արտադրողի, ինչը որ հակասում է ՀՀ Գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածին: